

ՀՀ Արմավիրի մարզի Գայ գյուղական համայնքի
ղեկավարի 2014 թ.-ի ընթացքում կատարած
աշխատանքների վերաբերյալ

Հարգելի համագյուղացիներ, համայնքի ավագանու հարգարժան անդամներ, հյուրեր: Այսօր ցանկանում եմ ձեր ուշադրությանը և քննարկմանը ներկայացնել հաշվետվություն՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում.

Կատարվել է համայնքի տնտեսությունների գրքերի ուղղում և համայնքի բնակիչների հաշվառում: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 3406 բնակիչ, որից մշտական՝ 3228:

Հաշվետու տարում համայնքում գրանցվել է 49 ծնունդ և 38 մահ:

Գումարվել է ավագանու 12 նիստ, որի ընթացքում լսվել են բազմաթիվ հարցեր և ընդունվել են ավագանու 55 համապատասխան որոշումներ: Իրականացվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել 98 դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

Մուտք է արվել 172 գրություն, որոնք քննարկվել են, տրվել է ընթացք և պատասխանը ուղարկվել հասցեատերերին:

Համայնքի հիմնախնդիրների լուծման համար տարբեր ուժային կառույցներից գրվել է 203 գրություն:

Բնակչությանը տրամադրվել է 989 տեղեկանք: Ընդունվել են համայնքի ղեկավարի 67 որոշում և արձակվել 27 կարգադրություն:

2. Ֆինանսների բնագավառում.

Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, ավագանու որոշումներով բյուջեում կատարվել են փոփոխություններ:

Կազմակերպվում և գանձվում են գույքահարկը և հողի հարկը:

Հողի հարկը՝ 8000.0 հազ. դրամի տարեկան ծրագրի դիմաց գանձվել է մոտ 7801.7 հազ. դրամ, կամ կատարվել է 97.5%:

Գույքահարկը՝ 11550.0 հազ. դրամի տարեկան ծրագրի դիմաց գանձվել է 10907.7 հազ. դրամ, կամ կատարվել է 94.4%:

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում.

Ոստիկանության տեղամասային տեսուչի աջակցությամբ աշխատանքներ են տարվում հասարակական կարգի պաշտպանության բնագավառում: Համայնքում իրավախախտման դեպք չի արձանագրվել:

4. Պաշտպանության բնագավառում.

Աջակցություն է ցուցաբերվել զինակոչին, պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձածները պահանջվող կարգի համաձայն վերցվել են հաշվառման:

Աջակցել ենք զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափողների որոնման, հայտնաբերման աշխատանքներին:

Դրամական սոց. օգնություն է ցուցաբերվել Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին և վիրավոր ազատամարտիկներին:

Հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում: Կատարվել է ավտոդպրոցում սովորող զինակոչիկների ճանապարհածախսի փոխհատուցում:

5. Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բնագավառում

Կառուցապատողներին սահմանված կարգով տրվել է շինարարության թույլտվություն, արգելվել է ապօրինի շինարարությունը: Կատարվել են Գարնանային փողոցի և Երևանյան փողոցի մի հատվածի բարելավման աշխատանքներ՝ ճանապարհները հարթեցվել և խճապատվել են:

Համայնքի կենտրոնական՝ Խաչատրյան փողոցում անցկացվել է լուսավորություն: Ամիսը չորս անգամ գյուղում իրականացվել է սիստեմատիկ աղբահանություն:

6. Հող օգտագործման բնագավառում.

Հողային հաշվեկշիռը կազմելու համար կատարվել է հողերի ընթացիկ հաշվառում և ներկայացվել կադաստրի տարածքային ստորաբաժանում:

Իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդ-վաճառք և վարձակալության տրամադրում:

Կատարվել է ցանքի ընթացիկ հաշվառում և ներկայացվել է տարածքային վիճակագրական վարչություն:

Համայնքում ապօրինի հողօգտագործողներ չկան:

7. Առևտրի և սպասարկման բնագավառում.

Համայնքում գործում են 7 խառն ապրանքների վաճառքի խանութներ, 1 սուպերմարկետ, 2 դեղատուն, 1 թունաքիմկատների խանութ և 1 սերմերի խանութ:

Հաճախակի ստուգումներ է անցկացվում առևտրի օբյեկտներում և խախտման դեպքեր չեն արձանագրվել:

8. Կրթության և մշակույթի բնագավառում.

Համայնքը ունի բարեկարգ դպրոց, որտեղ ընդգրկված են 415 աշակերտներ և 41 աշխատողներ: Գյուղապետարանը դպրոցում անցկացվող միջոցառումներին իր մասնակցությունն ու աջակցությունն է ցուցաբերում:

Գյուղապետարանի աջակցությամբ գործում է նախակրթարան՝ սեկ դասարանով:

Սեպտեմբերի 1-ին դպրոցի 1-ին դասարանի աշակերտներին տրվել են պայուսակներ, գրենկան պիտույքներ, իսկ ամանորին նախակրթարանի և 1-ից -4-րդ դասարանների աշակերտներին բաժանվել են ամանորյա նվերներ:

Գյուղն ունի նախադպրոցական տարիքի 212 երեխաներ, սակայն չունի մանկապարտեզ, որը խիստ անհրաժեշտություն է:

Մշակույթի տունը վթարային վիճակում է՝ չնայած տանիքը վերանորոգվել է:

Եվ մանկապարտեզի շենքի կառուցումը, և մշակույթի տան հիմնավերանորոգումը հնարավոր չէ իրականացնել համայնքի բյուջեի հաշվին:

Համայնքում գործում է «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը, որի վերանորոգման աշխատանքները իրականացվել է 2014թվականի օգոստոս ամսվա ընթացքում: Սակայն «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը կարիք ունի նաև ներքին կոսմետիկ վերանորոգման, որը նախատեսվում է իրականացվել 2015 թվականի ընթացքում:

Համայնքում ակտիվ գործում է գրադարանը, որից օգտվում են շուրջ 320 ընթերցող:

Համայնքը աջակցություն է ցուցաբերում նաև համայնքում գործող Սուրբ Նշան եկեղեցուն: Ամեն տարի օգոստոս ամսին համայնքը գյուղում կազմարերպում է մեծ միջոցառում նվիրված՝ «Սուրբ Նշան» եկեղեցու տոնին:

9. Առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի բնագավառում

Համայնքում գործում է «Գայի բժշկական ամբուլիատորիա» ՀՈԱԿ-ը, որին ցուցաբերվում է աջակցություն՝ ուղղված համայնքի սանիտարական վիճակի բարելավմանը, համաճարակային հիվանդությունների կանխարգելմանը:

Համայնքում գործում է ֆուտբոլային խմբակ, որի մարզիչը վարձատրվում է համայնքի բյուջեից:

10. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում.

Համայնքում կան 434 տարիքային թոշակառուներ և 34 նպաստառու ընտանիք:

Համայնքի սոցիալապես անապահով 61 ընտանիքների գյուղապետարանի բյուջեից ցուցաբերվել է 2560.0 հազ. դրամի օգնություն:

11. Գյուղատնտեսության բնագավառում.

Կատարվել է անասունների հաշվառում և ներկայացվել վիճակագրական վարչություն:

Համայնքում կազմակերպվել են հանդիպումներ բնակչության հետ, որտեղ արծարծվել են մշակաբույսերի տարածված հիվանդությունների և ժամանակակից բուժման նոր մեթոդների լուսաբանման հետ կապված հարցեր:

Գայ համայնքում բնակչությունը հիմնականում զբաղվում է տնամերձ հողամասերի վրա կառուցված ջերմոցներում բանջարեղենի մշակությամբ:

Սեփականաշնորհված հողատարածքները հիմնականում չեն մշակվում, ոռոգման ջրի բացակայության պատճառով:

Համայնքի բնակիչներին բաժանվել է ազոտական, ֆոսֆորական և կալիումիական պարարտանյութեր:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1. Մշակույթի տան վերանորոգում
2. Մանկապարտեզի շենքի կառուցում
3. Գյուղատնտեսական հողերի կարգերի ճշտում
4. Ոռոգման ջրի խնդրի լուծում
5. «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կոսմետիկ վերանորոգում

Համայնքում առկա հիմնախնդիրների մեծ մասը հնարավոր չէ իրականացնել միայն գյուղապետարանի բյուջեի հաշվին:

Ակնկալում ենք, ՀՀ կառավարության և Արմավիրի մարզպետարանի աջակցությունը այս հարցում:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝



Ս. Մարկոսյան